Հաստատված է
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ամբիոնի << 31 >> << 08>> 2018. նիստում (արձ. Թիվ 1)
Ամբիոնի պետ _____ Մ. Մուրադյան
2018թ.

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ		ՀՀ աշխատանքային և սոցիալական ապահովության իրավունք
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ		
ՖԱԿՈՒԼՏԵՏ		Իրավագիտություն, հեռակա ուսուցում
ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		Իրավագիտություն
ԱՄԲԻՈՆ		Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոն
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ		Ա. Տոնոյան E-mail: anjela.tonoyan@mail.ru 094695710
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ		3-րդ կուրս, 1-ին կիսամյակ

ԿՐԵԴԻՏՆԵՐ		
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ		«ՀՀ աշխատանքային իրավունք» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 4 ժամ, որից 2 դասախոսություն, 2 սեմինար:
ՆԱԽԱՊԱՅՄԱՆ		Դասընթացը կառուցվում է. Սահմանադրական իրավունք, քաղաքացիական իրավունք, Մարդու իրավունքների հիմունքներ առարկաների նյութերի իմացություն, ՀՀ Սահմանադրության իմացություն:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ		«ՀՀ աշխատանքային իրավունք» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են՝ աշխատանքային իրավունքի առարկան, աշ-խատանքային իրավունքի աղբյուրները, աշխատանքային իրա-վունքի սկզբունքները, աշխատանքային իրավա-հարաբերություններ հասկացությունը և սուբյեկտները, ժամկետային աշխատանքի հասկացությունը, ժամկետը աշխատանքային իրավահարաբերություններում, աշխատանքային իրավունքների իրականացումը և պաշտպանությունը, աշ-խատանքային պայմանագիր. հասկացությունը և տեսակները, կոլեկտիվ պայմանագիր, աշխատանքային պայմանագրի կնքում և լուծում:

ՆՊԱՏԱԿ **ԽՆԴԻՐ/ՆԵՐ**		Դասընթացի նպատակն է ուսանողներին մատուցել համապարփակ գիտելիքներ՝ 1. ՀՀ աշխատանքային իրավունքի էության և բովանդակության, 2. ՀՀ աշխատանքային իրավունքի հիմնական հասկացությունների և օերնքների, 3. Հիմնախնդիրների 4. Աշխատանքային պայմանագրերի վերաբերյալ: • պարզաբանել ՀՀ օրենսդրության կարգավորումները աշխատանքային հարաբերությունների շրջանակներում, • պարզաբանել աշխատանքային օրենսդրության համակարգը, • սովորեցնել վերլուծել աշխատանքային իրավահարաբերություններիող բխող, ինչպես նաև նրա հետ առնչվող դրոյթները, • սովորեցնել ուսանողների մոտ գործնական մոտեցումների ի հայտ գալը՝ տվյալ առարկայի շրջանակներում քննարկվող խնդիրները լուծելիս, • սովորեցնել ուսանողներին յուրաքանչյուր իրավական խնդրին որակում տալը, • սովորեցնել օգտվել գիտական ու որոնողական-տեղեկատվական մասնգիտական ինտերնետային աղբյուրներից:
ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ***1. Կարողնա՝***		1. վերարտադրել ՀՀ օրենսդրության կարգավորումները աշխատանքային հարաբերությունների վերաբերյալ ու դրանք կիրառել պրակտիկ աշխատանքում, 2. բացահայտել աշխատանքային հարաբերությունների իրավական կարգավորման մակարդակն ու որակը, և տալ դրանց իրավական գնահատականը, 3. վեր հանել աշխատանքային իրավունքի խնդրահարույց տեսական դրույթները, վերլուծել դրանք և դրանց հիման վրա զարգացնել սեփական դատողությունները, 4. ընտանեկան իրավունքի և օրենսդրության վերաբերյալ ձեռք բերված գիտելիքները կիրառել պրակտիկայում, 5. օգտվել տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ,), 6. վերլուծել փաստերն ու կատարել հետևություններ, ստեղծագործաբար կիրառել ու զարգացնել ունեցած գիտելիքները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		

Հիմնական		ՀՀ Սահմանադրություն • ՀՀ աշխատանքային օրենսգիրք • ՀՀ քաղաքացիական օրենսգիրք • Զբաղվածության մասին ՝ ՀՀ օրենքը • Նվազագույն ամսական աշխատավարձի մասին ՀՀ օրենքը • Մարդու իրավունքների համընդհանուր Հռչակագիր (1948) • Արհեստակցական միությունների մասին ՀՀ օրենքը • Խրոպանյուկ Վ.Ն.: Պետության և իրավունքի տեսություն, Երևան, ԳՈՇ, 1997, • ՀՀ աշխատանքային իրավունք: Ընդհանուր մաս / Երևանի պետ. հասալս. Եր. ԵՊՀ. հրատ., 2009 - 336 էջ Գ. Վ.Պետրոսյան
Լրացուցիչ	1. 2. 3. 4. 5.	1. Гусов К.Н., Толкунова В.Н. Трудовое право России Учебник. - М.: «Юрист». 1997, 2. Тихомиров М.Ю. Трудовые споры (контракты). Образцы документов, комментарий, нормативные акты. -М., 1999, 3. Толкунова В.Н. Трудовые споры и порядок их разрешения - М., «Юрист», 1993, 4. Советское трудовое право. Под ред. А.И. Процевского. Изд объеденение «Вища Школа». Киев, 1981, 5. Трудовое право России. Учебник. Под ред. А.С. Пашкова. СПб., 1994, 6.Киселев И.Я. Зарубежное трудовое право.Учебник для вузов.-М. «НОРМА-ИНФРА-М», 1998 7.Желтов О.Б. Трудовое Право: учебник.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ		Ստուգարք (ստուգված, չստուգված)

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ		
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ		Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված»: Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝ ա) «Գերազանց», եթե ունկնդիրը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ոստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով. բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների. գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները. դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները:
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		

Ներկայություն		Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի ուսանողին:
Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ		Սովորողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկընդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն աշխատանքների հանձնում: Սովորողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:
		Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:
Ինքնուրույն և գործնական աշխատանքներ		Ինքնուրույն աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում սովորողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի**:**

ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՄԱՆ ՔԱՐՏԵԶ

Թեմա 5 Աշխատանքային պայմանագիր (2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1.Աշխատանքային պայմանագրի	Հարցեր 1-2 – ներկայացվում է

բովանդակությունը և պայմանագրի կնքումը 2.Աշխատանքային պայմանագրի տեսակները	դասախոսություն: Հարցեր 1-2 – անցկացվում է սեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են աշխատանքային պայմանագրի հասկացությունը և նշանակությունը, կատարվում է դրանց խմբային քննարկում: Սովորողներն ուսումնասիրում են թեմային առնչվող գրականությունը:

Հարցաշար

«Աշխատանքային իրավունք» առարկայի ստուգարքի

1. Աշխատանքային իրավունքի հասկացությունը
2. Աշխատանքային իրավունքի կարգավորման առարկան
3. Աշխատանքային իրավունքի կարգավորման մեթոդը
4. Աշխատանքային իրավունքի համակարգը
5. Աշխատանքային իրավունքի աղբյուրի հասկացությունը
6. Աշխատանքային իրավունքի աղբյուրների դասակարգումը
7. ՀՀ Սահմանադրությունը որպես աշխատանքային իրավունքի աղբյուր

8. Միջազգային իրավական ակտերը որպես աշխատանքային իրավունքի աղբյուր
9. ՀՀ աշխատանքային օրենսգիրքը որպես աշխատանքային իրավունքի աղբյուր
10. Այլ նորմատիվ իրավական ակտերը որպես աշխատանքային իրավունքի աղբյուր
11. Աշխատանքային իրավունքի սկզբունքների բնութագիրը
12. Ընդհանուր–իրավական սկզբունքներն աշխատանքային հարաբերությունների ոլորտում
13. Միջճյուղային–իրավական և ճյուղային սկզբունքները աշխատանքային հարաբերությունների ոլորտում
14. Աշխատանքային իրավահարաբերությունների հասկացությունը, կառուցվածքը և առանձնահատկությունները
15. Աշխատանքային իրավահարաբերությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը
16. Աշխատանքային իրավահարաբերությունների դասակարգումը
17. Աշխատանքային պայմանագրի բովանդակությունը և պայմանագրի կնքումը
18. Աշխատանքային պայմանագրի տեսակները
19. Ժամանակավոր պայմանագիր
20. Համատեղությամբ պայմանագիր
21. Փորձաշրջանի սահմանումը
22. Գործադուլի հասկացությունը